ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ N1

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ՝

- Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության և Արմավիրի համայնքապետարանի միջև կնքված 22.03.2020թ. թիվ 22 պայմանագիրը,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության 24.12.2019թ. 1910-Ա որոշումը՝ համայնքների հետ կնքված սուբվենցիաների տրամադրման մասին պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության 13,02,2020թ. 166-ն որոշումը՝ համայնքներին աջակցության նպատակով հատկացվող գումարների մասին
- Արմավիր համայնքի 2019թ. բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությամբ արտացոլված պարտքերի կառուցվածքը,
- Արմավիրի մարզպետի 26,02,2020թ. թիվ 01/16/01/21-2020 գրությունը սուբվենցիոն ծրագրերի մասին՝Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման՝համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգին համապատասխան ներդրումային ծրագրերին մասնակցելու համար,
- Արմավիրի <<Բարեկարգում>> տնօրինության տնօրենի 25.02.2020թ. թիվ 17 զեկուցագիրը,
- Արմավիրի քաղաքապետարանի մշակույթի տուն ՀՈԱԿ-ի տնօրենի 03.03.2019թ. թիվ 883 զեկուցագիրը,
- Արցախյան ազատամարտում անհայտ կորած և զոհված ազատամարտիկների հուշարձանի տարածքի համար շատրվանի ձեռք բերման և շատրվանի կառուցման, Շահումյան փողոցի Ջիվան-Չարենց հատվածների, Չարենց փողոցի Երևանյան-Շահումյան հարվածի ճանապարհի հիմնանորոգման, միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգման շին աշխատանքների համար, թիվ 4 մանկապարտեզի աստիճանավանդակի վերանորոգման համար կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և բակային տարածքների համար խաղահրապարակի խաղերով կահավորելու անհրաժեշտությունը,
- Աջակցության համար դիմաց Հասարակական կազմակերպությունների դիմումները
- քաղաքաշինության և բնակկոմունալ հարցերի բաժնի պետի 14.02.2020թ. թիվ 0580 զեկուցագիրը՝ երաժշտական դպրոցի մանրահատակի նորոգման համար անհրաժեշտ նյութերի գնման մասին